

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հրապարակված է 16.06.2023թ.
 Ամփոփագրում նշված պայմանները
 կարող են փոփոխված լինել
 Հեռ. (+374 10) 510 510,
www.inecobank.am

Երկրորդային շուկայից տրանսպորտային միջոցների ձեռքբերման վարկերի տեղեկատվական ամփոփագիր

Վարկի նպատակը		Երկրորդային շուկայից անձնական օգտագործման թեթև մարդատար տրանսպորտային միջոցի ձեռքբերում	
Վարկառուի նկարագիր		ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ	
Համավարկառու նկարագիր		ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ, ով հանդիսանում է Վարկառուի ընտանիքի անդամը	
Տրանսպորտային միջոցի տարիքը		Վարկի տրամադրման պահին չպետք է գերազանցի 8 տարին	
Վարկի արժույթ		ՀՀ դրամ	
Վարկի ժամկետ	Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար	48 ամիս	
	Լողացող տոկոսադրույքով վարկերի համար	60,72 ամիս	
Տարեկան անվանական տոկոսադրույք¹	Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար	Եկամուտների հիմնավորմամբ	Առանց եկամուտների հիմնավորման
		• 16.75%	• 17.75%

¹ Առանց ԿԱՍԿՈ կամ ԿԱՍԿՈՆ Հաճախորդի կողմից իրականացնելու դեպքում

		<ul style="list-style-type: none"> 50% և ավել կանխավճարի դեպքում` - 0.5% 	
	Լողացող տոկոսադրույքով վարկերի համար	Առաջին 3 տարին չփոփոխվող` <ul style="list-style-type: none"> 16.75% 50% և ավել կանխավճարի դեպքում` - 0.5% այնուհետև լողացող	Առաջին 3 տարին չփոփոխվող` <ul style="list-style-type: none"> 17.75% այնուհետև լողացող
		Եկամուտների հիմնավորմամբ	Առանց եկամուտների հիմնավորման
Տարեկան փաստացի տոկոսադրույք	Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար	17.77-22.12%	19.53-23.34%
	Լողացող տոկոսադրույքով վարկերի համար	17.77-22.12%	19.53-23.34%
Այն դեպքում, երբ ԿԱՍԿՈ ապահովագրությունը իրականացվում է Բանկի կողմից, վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը սահմանվում է 2 տոկոսային կետով ավելի բարձր:			
Վարկի գումար (ՀՀ դրամ) ²		3,000,000 – 50,000,000	
Կանխավճարի նվազագույն չափ³		Ձեռքբերվող տրանսպորտային միջոցի շուկայական արժեքի` 0% ⁴ -ից սկսած	

² Վարկի տրամադրման առավելագույն սահմանաչափը որոշվում է կախված հաճախորդի վարկարժանության գնահատականից:

³ Կանխավճարի չափը սահմանվում է վարկարժանության գնահատման ավտոմատացված համակարգի կողմից

⁴ Բանկի Իրավասու մարմնի որոշմամբ` Բանկի համար ընդունելի լրացուցիչ գույքի առկայության դեպքում

Վարկ գրավ հարաբերակցություն	մինչև 100% <i>Գրավային արժեք է համարվում տվյալ տրանսպորտային միջոցի գնահատված և ձեռքբերման արժեքներից նվազագույնը</i>
Վարկի տրամադրման միանվագ վճար	Վարկի գումարի 0.5%, նվազագույնը 50,000 ՀՀ դրամ
Վարկի տրամադրման եղանակ	Միանվագ անկանխիկ եղանակով
Հաշվի բացման վճար	Համաձայն համապատասխան բանկային հաշվի սակագնային պլանի
Ապահովություն	Գրավի առարկա է հանդիսանում ձեռքբերվող տրանսպորտային միջոցը: Բանկի կողմից ըստ անհրաժեշտության կարող է պահանջվել ընտանիքի անդամների, այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց երաշխավորություն և լրացուցիչ գրավի առկայություն:
ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՈԲՄ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ՎՃԱՐԵԼ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՓՈԽԱՐԵՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ և ՀՆԱՐԱՎՈՐ Է՝ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ ՉՐԿՎԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻՑ:	
Ապահովագրություն	<ul style="list-style-type: none"> Գրավադրվող տրանսպորտային միջոցի ԿԱՍԿՈՒ տեսակի ապահովագրություն, որն ապահովվում է Բանկի կողմից: Բանկն ապահովում է ԿԱՍԿՈՒ ապահովագրության իրականացումը պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում: Կարող է պահանջվել նաև վարկառուի/համավարկառուի/երաշխավորի դժբախտ պատահարներից ապահովագրություն: <p>Ապահովագրությունը իրականացվում է տարեկան կտրվածքով վարկի ամբողջ ժամկետի ընթացքում՝ առնվազն վարկի գումարի մնացորդի չափով: Բանկի կողմից իրականացնելու դեպքում՝ ապահովագրությունը կնքվում է Բանկի հետ համագործակցող ընկերությունները մեկի հետ, իսկ Հաճախորդի կողմից ապահովագրություն իրականացնելու դեպքում՝ Հաճախորդը կարող է ընտրել նաև այլ ապահովագրական ընկերություն: Ապահովագրության շահառու է հանդիսանում Բանկը:</p>

	<p>Կասկո ապահովագրություն կարող է չափահանջվել, հետևյալ պայմաններին միաժամանակ բավարարելու դեպքում՝</p> <ul style="list-style-type: none"> • Կանխավճարի չափը կազմում է 30% և ավելի • Վարկի գումարը չի գերազանցում 10,000,000 ՀՀ դրամը
Մարման եղանակ	Անուիտետային (տոկոսների և մայր գումարի ամենամսյա վճարում)
Վարկի վաղաժամկետ մարում	Տույժեր չեն սահմանվում
Վարկավորման համար երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների վճարներ*	<p>Գույքի գնահատման վճար</p> <ul style="list-style-type: none"> • Մինչև 15 000 ՀՀ դրամ <p>Գրավի իրավունքի գրանցման վճար</p> <ul style="list-style-type: none"> • 2,000 ՀՀ դրամ <p>Դժբախտ պատահարներից ապահովագրության վճար</p> <ul style="list-style-type: none"> • 0.15%-0.21% վարկի գումարից
*Անկախ սույն պայմաններում նշված դրույքաչափերից, երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:	
Ժամկետանց պարտավորությունների մարում	Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար հաշվարկվում է տույժ՝ չմարված գումարի մինչև 0.13%-ի չափով
Վարկի պայմանների վերանայման հայտի ուսումնասիրության վճար	20,000 ՀՀ դրամ ⁵
Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ	<p><i>Անհրաժեշտ փաստաթղթեր՝ մինչև վարկի վերջնական հաստատումը</i></p> <ul style="list-style-type: none"> • Վարկառուի անձը հաստատող փաստաթուղթ և հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) • Վարկառուի ամուսնության վկայական (եթե ամուսնացած է), կամ հայտարարություն ամուսնացած չլինելու վերաբերյալ

⁵ Վճարը չի գանձվում հայտի մերժման պարագայում:

	<ul style="list-style-type: none"> • Ավտոմեքենայի հաշվառման/գրանցման վկայագրի պատճեն և տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը⁶ • Վաճառողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը, • Վաճառողի ամուսնացած լինելու դեպքում՝ կնոջ/ամուսնու համաձայնություն, անհրաժեշտության դեպքում նաև ամուսնության վկայական և կնոջ/ամուսնու անձը հաստատող փաստաթուղթը և հանրային ծառայությունների համարանիշ (ՅԾՅ) • Վաճառողի/Վարկառուի ամուսնության պայմանագրեր՝ առկայության դեպքում (ըստ պահանջի) • Վաճառողի՝ իրավաբանական անձ լինելու դեպքում՝ Պետ.ռեգ.վկայականի պատճենը, Կանոնադրություն, Բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ Դեպոզիտարիայից տեղեկանք, տնօրենի անձը հաստատող փաստաթուղթը և հանրային ծառայությունների համարանիշ (ՅԾՅ) • Վարկառուի եկամուտները հիմնավորող փաստաթուղթ, այդ թվում՝ աշխատավայրից տեղեկանք (ըստ պահանջի) • Այլ փաստաթղթեր (ըստ պահանջի) • Տրանսպորտային միջոցի գնահատման հաշվետվությունը • Հաջորդող գրավի թույլտվություն (ըստ պահանջի) • Տրանսպորտային միջոցի սահմանափակումների մասին տեղեկանք (ըստ պահանջի) <p><i>Անհրաժեշտ փաստաթղթեր՝ վարկի հաստատումից հետո</i></p> <ul style="list-style-type: none"> • Տրանսպորտային միջոցի սահմանափակումների մասին տեղեկանք (ըստ պահանջի) • Տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի պատճենը, սեփականության վկայականը կամ Էլեկտրոնային տարբերակները
--	--

⁶ «Իսկականի հետ ճիշտ է: Սեփականության վկայականի բնօրինակը գտնվում է ինձ մոտ (ամսաթիվ, անուն/ազգանուն, ստորագրություն)» նշումով:

	<ul style="list-style-type: none"> • Ավտոմեքենայի գրավի իրավունքի գրանցման վկայական ՋԲԲ-ից • Այլ փաստաթղթեր (ըստ պահանջի)
--	---

Լողացող տոկոսադրույքի հաշվարկման և վերանայման պայմաններն ու կարգը

Լողացող տոկոսադրույքը հավասար է հղման տոկոսադրույքի և ֆիքսված կոմպոնենտի գումարին:

Հղման տոկոսադրույքը (Առաջնային ցուցանիշներ)

• ՀՀ դրամով տրամադրվող վարկերի համար 6 ամիս ժամկետայնությամբ ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի վերջին 6 ամսվա միջին ցուցանիշը կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվանշանի ճշգրտությամբ: Հրապարակվում է ՀՀ ԿԲ-ի կողմից՝ <https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx> ինտերնետային կայքում:

Երկրորդային ցուցանիշներ

• ՀՀ դրամով վարկերի դեպքում ՀՀ ԿԲ կողմից սահմանվող միջբանկային ռեպո դրույքը: Հրապարակվում է ՀՀ ԿԲ-ի կողմից՝ <https://www.cba.am> ինտերնետային կայքում:

Առաջնային ցուցանիշների անհասանելիության կամ գոյության դադարման դեպքում կիրառվում են երկրորդային ցուցանիշները, ընդ որում երկրորդային ցուցանիշների կիրառման դեպքում երկրորդային ցուցանիշների հիման վրա ֆիքսված կոմպոնենտը վերանայվում է այնպես, որ վարկի անվանական տոկոսադրույքի մեծությունը մնա անփոփոխ:

Ֆիքսված կոմպոնենտը

Որոշվում է սահմանված չփոփոխվող տոկոսադրույքից նվազեցնելով վարկի տրամադրման որոշման կայացման օրվա դրությամբ (ՀՀ դրամով վարկերի դեպքում գործող 6 ամիս ժամկետայնությամբ ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի ցուցանիշը:

Տոկոսադրույքի վերանայում

Տոկոսադրույքը պարտադիր ենթակա է վերանայման, եթե տվյալ ժամանակահատվածի համար հաշվարկված Հղման տոկոսադրույքի և գործող Հղման տոկոսադրույքի⁷ տարբերությունը կազմում է 0,5 տոկոսային կետից ավելի: Բանկը

⁷ Լողացող տոկոսադրույքի առաջին վերանայման ժամանակ, գործող Հղման տոկոսադրույքի փոխարեն հիմք է ընդունվում վարկի չփոփոխվող տոկոսադրույքի և ֆիքսված կոմպոնենտի տարբերության ցուցանիշը:

տոկոսադրույքների փոփոխության նշված պարտավորությունն ունի և՛ դրական, և՛ բացասական շեղման դեպքում: Հղման տոկոսադրույքի մինչև 0,5 տոկոսային կետը ներառյալ փոփոխության դեպքում վարկի տոկոսադրույքը չի վերանայվում: Լողացող տոկոսադրույքը Բանկի կողմից վերանայվում է տարին 2 անգամ՝ փետրվար 15-ին և օգոստոս 15-ին: Նշված օրերը ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրը՝ հիմք վերցնելով լողացող տոկոսադրույքի հաշվարկման հիմքում ընկած վերոնշյալ ցուցանիշների վերջին 6 ամսվա միջին ցուցանիշը: Վերանայվելու դեպքում նոր տոկոսադրույքը ուժի մեջ է մտնում վերանայման ամսվան հաջորդող երկրորդ ամսվա 1-ից: Լողացող տոկոսադրույքների դեպքում անվանական տոկոսադրույքի բարձրացման և իջեցման առավելագույն շեղմը սահմանվում է՝

- +/- 1,5 տոկոսային կետ

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ՝

1. ԲԱՆԿԸ ՆԱԽՔԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐԿԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/05-Ի, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՉ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:
2. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԶՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԻՆԵԿՈԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ (www.inecobank.am) «ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒԹՅՑ» ԷԶՈՒՄ:
3. ՉԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ/ԿԱՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՆԱԳԱՆՁՎԵԼ, ԻՍԿ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԿԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՃԱԽՈՐԴԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՃԱԽՈՐԴԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼԻՍ ԳՐԱԿԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:
4. Հաճախորդը իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության վարկային պայմանագրի կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (սա հանդիսանում է հաճախորդի մտածելու ժամանակը) միակողմանիորեն լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր ձևով տեղեկացնելով Բանկին

5. Բանկն իրավասու է հաճախորդի հետ պայմանագիր կնքել սույն փաստաթղթով սահմանված սակագներից և պայմաններից տարբերվող այլ սակագներով և պայմաններով:
6. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂ Ե ՓՈՓՈԽՎԵԼ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: Եթե հաճախորդը համաձայն չէ տոկոսադրույքի փոփոխության հետ, ապա իրավունք ունի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել պայմանագիրը՝ վերադարձնելով տրամադրված վարկի հիմնական գումարն ամբողջությամբ և վճարելով հաշվարկված տոկոսները և այլ վճարները: Անկախ Բանկի կողմից սահմանված սակագնի մեծությունից, վարկի (փոխառության) տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:
7. Հաճախորդն իրավունք ունի կրեդիտավորման պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու): Հաճախորդի կողմից կրեդիտավորման պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու) դեպքում համամասնորեն նվազեցվում է սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսը:
8. Հաշվին մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկի պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ միջնորդավճարների, տույժերի, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի սույն կետով սահմանված մարումն իրականացնել այլ հաջորդականությամբ:
9. Տոկոսադրույքը կիրառվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:
10. Վարկի տրամադրման դրական որոշման գործոններն են՝
- կայուն եկամտի աղբյուր,
 - դրական կամ չեզոք վարկային պատմություն,
 - արժանահավատ և լիարժեք փաստաթղթեր,
 - բավարար գրավի առկայություն:
11. Վարկը մերժելու գործոններն են՝
- վարկը մարելու համար անբավարար եկամուտներ,
 - հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տվյալների տրամադրում,
 - բացասական վարկային պատմություն,
 - հաճախորդի եկամտի աղբյուրի ռիսկային ոլորտ,
 - բավարար գրավային ապահովության բացակայություն:
12. Վարկի տրամադրման որոշման կայացում և հաճախորդին տեղեկացում՝ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 1 աշխատանքային օր:
13. Վարկի տրամադրման ժամկետ՝ դրական որոշման կայացումից և պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 3 աշխատանքային օրվա ընթացքում:

- 14.** Վարկերը ձեվակերպվում են բանկի Ունիվերսալ և Մանրածախ մասնաճյուղերում և կենտրոնական գրասենյակում: Բանկի մասնաճյուղերի հասցեներին կարող եք ծանոթանալ Ինտերբանկ ՓԲԸ-ի պաշտոնական կայքում՝ www.inecobank.am:
- 15.** «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է հաճախորդից «ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ (նման պահանջի առկայության դեպքում):
- 16.** Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Հաճախորդի՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:
- 17.** Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:
- 18.** Սպառողական վարկի ամբողջական պայմաններին կարող եք ծանոթանալ Ինտերբանկ ՓԲԸ-ի պաշտոնական կայքում՝ www.inecobank.am:

Բանկի հետ հաղորդակցման եղանակ

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՄՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵՏԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹԴԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

Հաշիվների քաղվածքների և տեղեկանքների տրամադրում

Ծառայություն	Սակագին
Հաշվի քաղվածքի տրամադրում Բանկում	Անվճար
Հաշվի քաղվածքի տրամադրում փոստով (ամսական)	<ul style="list-style-type: none"> • ՀՀ տարածքում՝ անվճար • ՀՀ տարածքից դուրս՝ 2,000 ՀՀ դրամ + փոստային առաքման ծախսերը
Հաշվի քաղվածքի տրամադրում Էլ. փոստով	Անվճար
Հաշվի քաղվածքի կրկնօրինակի տրամադրում	<ul style="list-style-type: none"> • մինչև 1 տարվա վաղեմության- 1,000 ՀՀ դրամ • 1 տարուց ավել վաղեմության- 3,000 ՀՀ դրամ
Քաղվածքի տրամադրման ժամկետ	Հաճախորդի պահանջով Բանկը պարտավոր է հնգօրյա ժամկետում Հաճախորդին տրամադրել իր Հաշվի վերաբերյալ Հաշվի քաղվածք՝ գանձելով Հաշվի քաղվածքի տրամադրման համար Սակագներով սահմանված վճարները:

Տեղեկանքների տեղեկատվության տրամադրում (մինչև 3 տարի վաղեմության)	Բանկային հաշվի վերաբերյալ և SWIFT հաղորդագրության պատճենի տրամադրում - 3,000 ՀՀ դրամ
	Գործարքների մանրամասների (այդ թվում արագ դրամական փոխանցումների համակարգերով) վերաբերյալ ⁸ - 3,000 ՀՀ դրամ
	Վարկերի և դրանց ապահովությունների վերաբերյալ ⁹ - 5,000 ՀՀ դրամ ¹⁰
	Եկամտային հարկի փոխհատուցում ստանալու նպատակով հիփոթեքային վարկի և հիփոթեքային վարկի ծրագրային համապատասխանության վերաբերյալ տեղեկանք - անվճար
	Այլ տիպի և/կամ վաղեմության տեղեկանքների և տեղեկատվության տրամադրում- 10,000 ՀՀ դրամ
Տեղեկանքի ժամկետ	տրամադրման Առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում

Ձեր ֆինանսական տեղեկատու

«Ձեր ֆինանսական տեղեկատու»՝ WWW.FININFO.AM, ՖԻՆԻՎԻՍԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՁ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՄՆԱԿԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

Բանկային ծառայությունների մատուցումը հեռակառավարման համակարգերի միջոցով

1. Բանկն առաջարկում է ԻնեկոՕնլայն, ԻնեկոՄոբայլ և այլ Համակարգեր՝ ինտերնետով, հեռախոսազանգի կամ SMS հաղորդագրության և կապի այլ միջոցներով բանկային ծառայություններից օգտվելու, ինչպես նաև տեղեկություններ ստանալու հնարավորություն՝ առանց Բանկ այցելելու: Համակարգերը ժամանակակից և հարմարավետ գործիքներ են, որոնք հնարավորություն են ընձեռում դիտել Հաշիվներով կատարվող գործառնությունները, ներկայացնել վճարման հանձնարարականներ, ստանալ տեղեկություններ, կատարել արտարժույթի փոխանակում, վճարումներ, ներկայացնել և ստանալ (ակցեպտավորել) դիմումներ, հայտեր, առաջարկներ (օֆերտաներ), կնքել պայմանագրեր և այլ գործարքներ, ինչպես նաև իրականացնել տվյալ Համակարգում Բանկի կողմից մատչելի դարձված ֆինանսական և այլ գործառնություններ: Համակարգերի տեսակները, դրանց օգտագործման պայմանները և կանոնները հրապարակվում են Կայքում կամ

⁸ 10 գործարքից ավել տեղեկատվության համար կիրառվում է «Այլ տիպի» տեղեկանքների համար սահմանված սակագինը:

⁹ 2 և ավելի պայմանագրերի գծով տեղեկատվություն ներառելու դեպքում, կիրառվում է «Այլ տիպի» տեղեկանքների համար սահմանված սակագինը:

¹⁰ Համաձայնությունների սակագները կարգավորվում են համաձայն վարկավորման սակագների:

համապատասխան Համակարգից օգտվելու համար սահմանված այլ կայքերում, ծրագրային ապահովման միջոցներում և բջջային հավելվածներում և կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել:

2. Համակարգերը հասանելի են Բանկում համապատասխան հաշիվներ ունեցող Հաճախորդների համար: Հաճախորդին համապատասխան Համակարգից օգտվելու սարքի, օգտագործողի անվան, գաղտնաբառի, ինչպես նաև Հաճախորդին համակարգից օգտվելու հնարավորությունն այլ կերպ ընձեռելը նշանակում է, որ Հաճախորդի և Բանկի միջև կնքվել է Համակարգի տրամադրման պայմանագիր՝ Հիմնական պայմաններին համապատասխան: Համակարգի տրամադրման պայմանագրի անբաժանելի մասն են Հիմնական պայմանները, Սակագները, համապատասխան Համակարգի օգտագործման ուղեցույցները, Բանկի ինտերնետային կայքերի, բջջային հավելվածների և այլ ծրագրային ապահովման օգտագործման կանոնները և պայմանները, ինչպես նաև Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերը:

3. Կողմերն ընդունում են, որ Համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ օգտագործողի անվանման, գաղտնաբառերի, կամ այլ հաղորդագրությունների մուտքագրմամբ Բանկն իրականացնում է Հաճախորդի անհրաժեշտ և բավարար նույնականացում, ինչը հիմք է Համակարգերի միջոցով Հաճախորդին բանկային ծառայություններ մատուցելու համար:

4. Կողմերն ընդունում են, որ Հաճախորդին նույնականացնելուց հետո Համակարգ մուտք գործելու համար Հաճախորդի կողմից օգտագործվող գաղտնաբառն ունի թղթային կրիչի վրա դրված բնօրինակ ստորագրությանը համարժեք իրավաբանական ուժ: Հաճախորդի կողմից Համակարգ մուտք գործելուց հետո Համակարգի միջոցով Բանկ ներկայացվող բոլոր հայտերը, դիմումները, պայմանագրերն ու այլ էլեկտրոնային փաստաթղթերը համարվում են ստորագրված Հաճախորդի կողմից: ԻնտեկտՕնլայն Համակարգի միջոցով տեղեկատվություն փոխանակելը հավասարազոր է Բանկի տարածքում առձեռն փոխանակելուն:

5. Հաճախորդը պարտավոր է խստիվ պահպանել Համակարգ մուտք գործելու գաղտնաբառի և այլ նույնականացնող տվյալների գաղտնիությունը և անհրաժեշտ շրջահայացությունն ցուցաբերել Համակարգերն օգտագործելիս այլ անձանց կողմից Համակարգ ապօրինի մուտքի հնարավորությունը և տվյալների հասանելիությունը բացառելու համար: Բանկը պատասխանատվություն չի կրում դրանք երրորդ անձանց բացահայտվելու արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար:

6. ԻնտեկտՕնլայն, ԻնտեկտՄոբայլ և այլ Համակարգերից օգտվելու համար Բանկը կարող է տրամադրել ծրագրային ապահովում, անվտանգության բանալիներ, չիպեր, թոքեններ և Համակարգ մուտք գործելու անվտանգությունն ապահովող այլ սարքեր: Այդ սարքերը համարվում են Բանկի սեփականությունը և ենթակա են օգտագործման Բանկի սահմանած կարգով: Սարքի կորստի կամ փչացման դեպքում Հաճախորդը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Բանկին: Բանկը կարող է պահանջել անհապաղ հետ վերադարձնել Հաճախորդին տրամադրված սարքերը, փոխարինել դրանք, ինչպես նաև սահմանել դրանց օգտագործման հատուկ կարգ և պայմաններ:

7. Բանկն օգտագործում է Համակարգերով տվյալների փոխանցման անվտանգությունն ապահովող ժամանակակից և հուսալի միջոցներ: Այդուհանդերձ, Հաճախորդը Համակարգերն օգտագործում է իր ռիսկով և Բանկը պատասխանատվություն չի կրում Համակարգերի օգտագործման հետ կապված խափանումների, տվյալների կորուստների, ինչպես նաև Համակարգերի օգտագործումից բխող Հաճախորդների տվյալների բացահայտման և Հաճախորդների ցանկացած այլ կորուստների և վնասների համար:

8. Համակարգերը տրամադրվում են դրանց հասանելիության պահին գործող պայմաններով և հնարավորություն են տալիս օգտվել փաստացի այդ պահին մատչելի գործառնություններից: Հաճախորդը տեղյակ է, որ կախված Վճարային համակարգերի կանոններից և տեխնիկական հնարավորություններից, Քարտային և այլ հաշիվների, ինչպես նաև այլ գործառնությունների վերաբերյալ որոշ տեղեկություններ կարող են Համակարգում արտացոլվել կամ թարմացվել հետագայում: Հաճախորդներին առաջարկվող ծառայությունների ցանկն ու առանձին հնարավորությունները կարող են սահմանափակվել կախված Հաճախորդի համակարգչի կամ այլ տեխնիկական միջոցների հնարավորություններից, կապի որակից, Բանկի կողմից իրականացվող տեխնիկական սպասարկման աշխատանքներից և այլ գործոններից: Բանկը կարող է ավելացնել կամ պակասեցնել Համակարգերով մատուցվող գործառնությունների շրջանակը, ինչպես նաև դադարեցնել կամ կասեցնել Համակարգի մատչելիությունը, (ներառյալ՝ լուծել Համակարգի տրամադրման պայմանագիրը)՝ տեխնիկական սպասարկման աշխատանքներ իրականացնելու կամ այլ պատճառներով:

9. Համակարգերի միջոցով Հաճախորդի ներկայացրած հայտերի ուսումնասիրման արդյունքների, ինչպես նաև Հաճախորդի այլ գործառնությունների մասին Բանկը կարող է տեղեկացնել էլեկտրոնային եղանակով, ներառյալ՝ Համակարգը սպասարկող ինտերնետային էջերի կամ բջջային հավելվածների համապատասխան մասում տեղեկություններ տեղադրելով, էլեկտրոնային փոստով, բջջային հեռախոսահամարին ուղարկված կարճ հաղորդագրությունների (SMS), Համակարգի բջջային հավելվածների կողմից ուղարկվող հաղորդագրությունների (Push Notifications) միջոցով և այլ եղանակներով: Համակարգի միջոցով կատարված գործառնությունների մասին տվյալները պահպանվում են Բանկի սերվերներում և համարվում են ապացույց՝ վիճելի հարցերի կարգավորման համար:

10. Բանկն իրավունք ունի Համակարգի միջոցով կատարվող գործառնությունների համար նախատեսել սահմանաչափեր, ինչպես նաև Հաճախորդի հանձնարարականներն ու ցուցումները կատարելիս իրականացնել Հաճախորդի ինքնության հավելյալ ստուգում՝ պահանջելով լրացուցիչ ձայնային կամ այլ հաստատում: Բանկը կարող է կասեցնել կամ դադարեցնել Համակարգ մուտք գործելու Հաճախորդի հնարավորությունը՝ Սակագներով և այլ փաստաթղթերով նախատեսված վճարները չկատարելու, սույն Հիմնական պայմանների պահանջները խախտելու, ինչպես նաև Հաճախորդի նույնականության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքերում:

11. Համակարգի տրամադրման պայմանագրի լուծումը չի հանգեցնում Բանկի և Հաճախորդի միջև առկա այլ պայմանագրային հարաբերությունների փոփոխմանը կամ դադարեցմանը, եթե գրավոր ձևով այլ բան համաձայնեցված չէ:

12. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ն վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերություններ

Անվանում	Հասցե	Հեռախոսահամար	Վեբ կայք/Էլ. հասցե
«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ	ՀՀ, 0010 ք. Երևան, Հանրապետության 51, 53, տարածք՝ 47, 48, 50	(+37410) 59 21 21	info@ingoarmenia.am http://www.ingoarmenia.am
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան Վ. Սարգսյան 10, տարածք 110 «Պիացցա Գոանդե» Բիզնես Կենտրոն	(+ 374 60) 50 00 60	nairi@nairi-insurance.am http://www.nairi-insurance.am

«ՌԵՍՈ» ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, 0014, Կոմիտասի պող. 62 2., 93-93/1:	(+ 374 60) 27 57 57	info@reso.am http://www.reso.am
«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲ	ՀՀ, ք. Երևան, Արամի 3	(+ 374 60) 54 00 00 (+374 10) 58-00-00	info@silinsurance.am http://www.silinsurance.am
«ՌՈՍԳՈՍՏՐԱԽ- ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1 (Նորդ ԲԿ-ի 4-րդ հարկ)	(+37410) 50 07 70	http://www.rgs.am

Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող կազմակերպություններ

Անվանում	Հասցե	Հեռախոսահամար	Վեբ կայք/Էլ. հասցե
ՕԼԻՎԵՐ ԳՐՈՒԴ ՍՊԸ	ք. Երևան 0001, Թումանյան 8, 215- 216 սեն.	(+374 10) 54 27 40 (+374 10) 54 27 50 (+374 10) 54 27 60 (+374 10) 54 27 70 (+374 91) 54 27 50 (+374 77) 54 27 50 (+374 55) 54 27 50	info@olivergroup.am http://www.olivergroup.am
ԿՈՍՏ ԿՈՆՍԱԼՏ ՍՊԸ	Հայաստան, 0010, Երևան, Խանջյան փող., 13/2 շենք	(+374 10) 54 48 82 (+374 91) 47 19 25	info@cost.am cost@consultant.com http://www.cost.am
ԱՄԻՆՏԱՍ ԳՐՈՒԴ ՍՊԸ	Ք. Երևան, Արցախի պողոտա 23/6 շենք տաղավար 50 /ՏՈՒՆ Դեպոյի հարևանությամբ/	(+374 10) 43 22 76 (+374 96) 43 22 76	amintasgroup@mail.ru
ՎԻ ԷՄ- ԱՐ ՓԻ ՍՊԸ	Հայաստան, 0010, Երևան Վարդանանց փող. փակուղի, 8 շենք	(+374 10) 58 87 97 (+374 99) 58 87 97	vm-rp@mail.ru http://www.vm-rp.am
ԱՓԹԱՅՄ ՍՊԸ	Հայաստան, 0002, Երևան	(+374 60) 53 53 71 (+374 98) 53 53 14	-

	Եկմայան փող., 6 շենք, 3-րդ հարկ («Բիզնես Պալեի» շենքում)	(+374 94) 71 37 10	
--	---	--------------------	--